ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

Գ. Ֆ. Խուլոպյան

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սփյուռքահայության պատմության ուսումնասիրությունն արդեն դարձել է հայ պատմագրության կարևոր խնդիրներից մեկը։ Այդ գործի ռահվիրաներից է Ալ. Մյասնիկյանը։ Այդպիսի ուսումնասիրությունների նպատակն է ոչ միայն նպաստել հայ ժողովրդի արդի պատմության ամբողջական շարադրմանը, ամրապնդել և ուժեղացնել սփյուռքի ու Մայր Հայրենիքի բնական ու փոխադարձ հարաբերությունները, ծանոթացնել սփյուռքահայ կյանքը Սովետական Միության և աշխարհի այլ երկրների ժողովուրդներին, այլև բացահայտել նրա առաջ ծառացած խնդիրները, ընդհանրացնել սփյուռքահայության փորձը և այդ հիման վրա ցույց տալ հայության այդ հատվածի հետագա զարգացման ուղիներն ու հեռանկարները։

Մեր կարծիքով անհրաժեշտ է նախ ճշգրտել գաղութահայ և սփյուռքահայ հասկացությունները, որոնք օգտագործվում են նշանակելու համար հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքները։ Այդ համայնքները, սակայն, տարբերվում են ոչ միայն ծագումնաբանությամբ ու պատմական ժամանակաշրջանով, այլ նաև հայ իրականության մեջ իրենց խաղացած դերով ու հայրենիքի հետ ունեցած հարաբերությունների բնույթով։ Հայ գաղութներն հիմնականում կազմակերպչորեն համեմատաբար թույլ ու փոքրաթիվ համայնքներ են եղել, որոնք աստիճանաբար առաջացել էին առևտրական կենտրոններում։ Նրանք գոյություն են ունեցել այն ժամանակ, երբ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը ապրում էր պատմական Հայաստանի հողի վրա և պայքարում էր հանուն ազատության։ Իսկ հայկական սփյուռքը կազմվել է, երբ Թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության հետևանքով հայերը մասսայարար տեղահան արվեցին իրենց հայրենի օջախից ու սփռվեցին աշխարհով մեկ։ Նրանց մեծ մասը հաստատվեց նախկին հայ գաղութներում՝ փոխելով վերջինների բնույթն ու էությունը։ Հայ սփյուռքի կազմավորումը զուգադիպեց նաև Մայր Հայրենիքում հայ պետականության հաստատման, սովետական կարգերի հաստատման ընթացքին։ Այդ պատմական երևույթը հիմնովին փոխեց արտասահմանյան հայության ճակատագիրը, դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ։ Մինչև 1920 թ. հայրենիքի սահմաններից դուրս էին գտնվում հայ դպրության ու մշակույթի կենտրոնները։ Այժմ հայրենիքը ազատագրված է ու դարձել է հայ հարուստ մշակույթի հիմնական դարբնոցը։ Ազատագրված հայրենիքն այժմ մտածում է իր սփյուռքահայ որդիների ճակատագրի մասին։ Հայրենիքի ու արտասահմանյան հայության դերերն ու դիրքերը փոխված են այժմ։

Սփյուռքահայության պատմության ուսումնասիրության ընթացքում ակներև է դառնում նրա երկակի բնույթը։ Գաղութահայության ու սփյուռքահայության պատմությունը մի կողմից հայ պետականության, հայ ժողովրդի համախմբվածության, հայերի աշխարհով մեկ սփռման ու զանգվածային ձուլման

պատմությունն է։ Իսկ մյուս կողմից, այն դեպի հայրենիք վերադարձի պատմությունն է, հայ ժողովրդի տոկունության, իր սեփական ստեղծագործ ուժերի և մարդկային վեհ գաղափարների նկատմամբ ունեցած անմար հավատքի ու ապրելու վճռականության արտահայտությունն է։ Ցրված լինելով աշխարհով մեկ, հայ ժողովուրդը իր լուման է ներդրել աշխարհի այլ ժողովուրդների ազատագրական պայքարի, ազգային զարթոնքի, տնտեսական ու մշակութային զարգացման գործում։

Այսպիսով, սփյուռքահայ կյանքի զարգացման ներքին տրամաբանությունն ինքնին վկայում է, որ սփյուռքահայության առաջ կանգնած ամենակարևոր խնդիրներից մեկը ժողովուրդների բարեկամության ու հավասարության գաղափարի պաշտպանությունն ու իրականացումն է։ Պատահական չէ, որ սփյուռքահայ հայրենասեր ու առաջադիմական հոսանքները միշտ ու բոլոր պայմաններում ապացուցել են, որ նրանք իրենց ապրած երկրների ժողովուրդների արդար պայքարի հավատարիմ ու նվիրված զինվորներն են։

Այդ բարեկամությունն առաջին հերթին արտահայտվում է տվյալ ժողովրդի առաջ ծառացած խնդիրների լուծմանը ակտիվորեն մասնակցելու մեջ։ Այդ պատճառով էլ այն ունենում է իր կոնկրետ դրսևորումը յուրաքանչյուր սփյուռքահայ օջախում։ Ժողովրդա-դեմոկրատական երկրներում այն արտահայտվում է սոցիալիզմի կառուցմանն անձնվիրաբար մասնակցելու մեջ, գաղութային և կիսագաղութային երկրներում՝ հանուն անկախության ու ազատության մղվող պայքարին մասնակցելու մեջ, նոր ազատագրված երկրներում՝ քաղաքական ու տնտեսական անկախության ամրապնդմանը մասնակցելու մեջ, ֆաշիզացիայի ենթարկվող երկրներում՝ հանուն դեմոկրատիայի մղվող պայքարին աջակցելու մեջ։ Բոլոր դեպքերում սփյուռքահայ առաջավոր ուժերը դաշնակցում են տվյալ երկրի դեմոկրատական ուժերի հետ և աշխատում բարձր պահել երկրորդ հայրենիքի պատիվն ու նրա ժողովրդի ազգային արժանապատվությունը։

Բազմաթիվ հայորդիներ, Մանուշյաններ ու Լասեր պայքարել են հանուն ազատ ու դեմոկրատական Ֆրանսիայի։ Առ ի երախտագիտություն փարիզեցիներն իրենց փողոցներն անվանել են Մանուշյանի, Նրա խմբի ու Հայկ Դպիրյանի անունով։ Բուլղար ժողովուրդը մեծ երախտագիտությամբ է հիշում Հերմլնե Ռազգրատյանի ու Հարություն Պողոսյանի անունները, որոնք հերոսաբար պայքարեցին բուլղար ժողովրդի թշնամիների դեմ։

Արաբական աշխարհում, ուր ապրում են մոտ 400000 հայեր, այդ բարեկամությունն ավելի ուժեղ է դրսևորվում։ Այդ երկրներում ապրող հայրենասեր ու առաջադեմ հայերը զգալի դեր են կատարել Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի ազատության ու զարթոնքի գործում։ Նրանց այդ ծառայությունները գնահատելով Լիբանանի նախկին պրեմիեր մինիստր Սոլհ ասել է. «Ես հայերի ներկայությունը այս երկրում ընդունում եմ գրկաբաց և առանձին հաճույքով։ Նրանք այս երկրի անկախությունը գուցե մեզանից ավելի լավ պաշտպանեն»[1]։

---

1 Մոռանալով այդ, որոշ լիբանանցի հեղինակներ աշխատում են զանազան խեղաթյուրումների միջոցով վատաբանել լիբանանահայերին ու փնասել հայ և արաբ ժողովուրդների բարեկամությանը։ Այդ տեսակետից ուշադրավ է Բեյրութի մեջ ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Մագազին» շաբաթաթերթի 1963 թ. հունվարի 10, 17, 24 համարներում հրապարակված Կլովիս Ռըզքի հոդվածաշարքը, որը քննադատվեց լիբանանյան առաջավոր մամուլի կողմից։

Այդ բարեկամությունն իր ցայտուն արտահայտությունն է գտնում նաև մշակութային ասպարեզում։ Հայ և արաբ առաջադեմ մտավորականների կողմից արաբերենի են թարգմանվել բազմաթիվ հայերեն գրքեր։ Արաբերենով հրատարակվել է հայժող պատմության մի ստվար հատոր, Ա. Խաչակյանի «Աբու Լալա Մահարին», Ն. Զարյանի «Հայոց լեզուն», Հ. Շիրազի «Սիամանթո և Խաչեզարեն», Վ. Անանյանի «Սևանի ափին» և այլ գործեր։ Արաբ հանդիսատեսը Սիրիայի ու Լիբանանի բեմերի վրա կարող է տեսնել Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»։ Արաբերենից հայերենի են թարգմանվել բազմաթիվ արաբ հեղինակների գործեր։ Հայ ընթերցասեր հասարակությունը հետաքրքրությամբ է կարդում Ռաֆֆ Խուրիի, Միշել Սլեյմանի, Ժորժ Շեհեգեի, Շաքեր Ղողբաքի. Մոհամեդ Քամալ Արդյուլ Հալիմի, Մուհասսադ Սդքիի և այլ արաբ գրողների երկերը։ Այս կապակցությամբ հատկապես ուշագրավ է Բեյրութում տեղի ունեցած Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակի տոնակատարությունը, որին մասնակցեցին նաև արաբ պետական ու մշակութային գործիչներ։ Այդ առթիվ լիբանանցի հայտնի լեզվաբան ու իսլամական գերագույն խորհրդի անդամ Շեյխ Աբդալա Ալեյլին հայտարարեց, որ Մաշտոցն իր մեծությամբ զավակն է նաև Լիբանանի. «Մեսրոպ Մաշտոցը, ինչպես մայր մը լիբանանյան, եկած է դարերէն ու կպատկանի դարերուն»[2]։ Հատկապես ուշագրավ է լիբանանցի տաղանդավոր բանաստեղծ Ռաֆֆ Խուրիի ելույթը։ «Արաբ և հայ ժողովուրդներու հարաբերությունները,—ընդգծել է նա,—հաղթականի և պարտյալի, տիրոջ և տիրապետյալի հարաբերություններ չեն եղած միշտ։ Եվ եթե պատմությունը Օմայադներու և Աբբասյաններու օրերուն արձանագրած է բռնատիրության փաստեր, այդ բոլորը պետք է վերագրել ծավալապաշտ պետության և ոչ թե ժողովրդին։ Մենք մեր կողմե սիրով ու հիացմունքով կարձանագրենք այն փաստը, թե հայ ժողովուրդը չի խոնարհած նաև արաբական պետության տիրապետության առջև։ Սիրով ու հիացմունքով կոգեկոչենք Աբբասյաններու դեմ հայերու ապստամբությունը, որ ծնունդ տվավ հայկական սքանչելի դյուցազներգության՝ «Սասունցի Դավիթ» դյուցազներգության»[3]։ Այսպիսով, ժողովուրդների բարեկամությունը միաժամանակ լավագույն միջոցն է նաև անցյալն ճշմարտացի գնահատելու ու պատմագիտական վիճելի ու ցավոտ հարցերը լուծելու համար։

Ի նշան հայ և արաբ ժողովուրդների բարեկամության այժմ Երևանի բուսաբանական այգում աճում են լիբանանյան երկու մայրիի ծառեր, իսկ Բեյրութի 13 փողոցներ կրում են հայկական անուններ։ Այդ քաղաքում այժմ կարելի է տեսնել «Արմենիա» պողոտա, և փողոցներ Արամ Խաչատրյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Մասիսի, Արարատի, Արաքսի և Երևանի անուններով։

Սփյուռքահայ հետադիմական ուժերին խորթ է ժողովուրդների բարեկամության սկզբունքը։ Երբ ամբողջ Եվրոպան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ պայքարում էր հանուն ազգային անկախության ու ազատության, հայ հետադիմականները դաշնակցում էին հիտլերյան Գերմանիայի հետ։ Արաբական Արևելքում նրանք չեն նպաստել այդ երկրների առաջընթացին։ 1925 թ. դաշնակցական բյուրոն խորհուրդ էր տալիս հայերին Ֆրանսիա-

2 Տե՛ս «Մեր նշանարանն է յառաջ», 1961, 24 դեկտ., էջ 2։
3 Նույն տեղում, էջ 3։

ցիների հետ միասին պայքարել սիրիական ազատագրական շարժման դեմ։ 1928 թ. դաշնակցական դեպուտատը սահմանադիր ժողովում մերժեց երկրին ազատություն տալու վերաբերյալ սիրիական տեսակետը և քվեարկեց հօգուտ ֆրանսիականի։ 1945 թ. դաշնակցական ղեկավարությունը ֆրանսիական բանակում ծառայող հայ զինվորականներին կոչ էր անում չլքել զենքը և ակտիվորեն պայքարել սիրիական հեղափոխական շարժման դեմ։ Բարեբախտաբար հայ ժողովուրդը արհամարհեց դաշնակցության այդ հայրենադավ կոչը։ Նույն ժամանակ Լիբանանի պառլամենտի դաշնակցական պատգամավոր Մովսես Տեր-Գալստյանը դեմ քվեարկեց Լիբանանին անկախություն տալու բանաձևին։ Ավելին, դաշնակցական ղեկավարությունը օտարերկրյա պետությունների թելադրանքով ցանկանում էր ֆրանսիացիներին օգնելու համար զինված ելույթներ կազմակերպել, որի համար խիստ կերպով սաստվեցին հանգուցյալ Գարեգին կաթողիկոսի կողմից։ Նրանք, վերջերս, Սիրիայում և Լիբանանում զբաղվում էին լրտեսական գործողությամբ և հօգուտ ԱՄՆ-ի ու Իսրայելի հավաքում էին լրտեսական տեղեկություններ։ Նրանց այդպիսի գործողությունների պատճառով մազ մնաց, որ արաբական որոշ երկրներում սկսվեին հակահայկական ջարդեր, եթե արաբական առաջադիմական շրջանակները ժամանակին չմիջամտեին ու ժողովրդին չհասկացնեին, որ դաշնակցությունը հայ ժողովրդի ներկայացուցիչը չէ, որ այն օտարներին ծախված մարդկանց մի խումբ է, որն ատելի է հայերին[4]։

Հայ հետադիմականների այսպիսի քաղաքականությանն ամբողջությամբ հակադրվում է սփյուռքահայ առաջադիմական ջոկատը։ Ճիշտ է, այդ ճակատում էլ ժողովուրդների բարեկամության սկզբունքը տարբեր մեկնություններ ունի։ Սակայն, ինչպիսին էլ լինի նրանց դիրքորոշումը այդ հարցում, հայ դեմոկրատները միշտ էլ ձգտում են նպաստել տվյալ երկրի ժողովրդի բարգավաճմանը, նրա ազգային արժանապատվության բարձրացմանն ու անկախության ամրապնդմանը։ Հայ առաջադեմ ու հետադիմական հոսանքների այս պայքարը, փաստորեն, տվյալ երկրի առաջավոր ուժերի ու համաշխարհային ռեակցիայի, իմպերիալիզմի միջև մղվող պայքարի արտահայտություններից մեկն է։ Օտարերկրյա ուժերն ու նրանց հնազանդ ազգային ռեակցիան չեն ցանկանում, որ այդ երկրներում տիրի խաղաղ վիճակ ու ժողովուրդների համերաշխություն։ Այդ հոսանքները քննադատելով ու հայ-արաբ բարեկամության ոգին գնահատելով արաբ ժողովրդի հերոս դավակ Ֆարուջալլա Հրլուն գրում է. «Ամեն անգամ, որ հետադիմականները մեզ այպանած են հայերուն հետ բարեկամ ըլլալնուս համար, անոնց պատասխանած ենք. ամչնալիք ոչինչ ունինք եղբայրակցելու համար աշխատավոր և պատվավոր ժողովուրդի մը, որ մեզի հետ ձեռք ձեռքի տված կը պայքարի մեր ազատության ու անկախության համար։ Եթե կա մեկը, որ պետք է ամչնա և իր դեմքը ծածկե, ատիկա դուք եք,

---

4 Տես. Հ. Աղպաշյան, Արաբական ազգային ազատագրական գաղափարը, Բեյրութ, 1959 թ., էջ 105—108։ Հ. Մատեյան, Կարևոր տվյալներ Դամասկոսի մեջ շարունակվող դաշնակներու դատավարության վերաբերյալ և պատմական ճշմարտություններ՝ փաստերու լույսի տակ, «Մեր Նշանաբանն է յառաջ», 1962 թ., ապրիլ 3, էջ 7—8։ Գ. Աղգարյան, Դաշնակ բյուրոն կը վտանգե հայ ժողովուրդի ապահովությունն ու ազգային շահերը, «Մեր Նշանաբանն է յառաջ», 24.4.62, էջ 7—8։ Հ. Ազպաշյան, «Ազդակ»-ի պոռչտուրը անգոր է փրկելու դաշնակ արկածախնդիր ղեկավարները, «Մեր Նշանաբանն է յառաջ», 13.5.62, էջ 7—8։

մեր հայրենիքին անկախության, ազատության և բարգավաճման թշնամի՝ օտար-կապիտալիստներու և իմպերիալիստներու գործակալներդ»[5]։

Ճանաչել ժողովուրդների բարեկամության սկզբունքն ու նրա իրականացման անհրաժեշտությունը նշանակում է ընդունել տարբեր քաղաքական սիստեմների խաղաղ գոյակցության հնարավորությունը։

Հայ ժողովուրդը, որը պատերազմների արհավիրքների հետևանքով կորցրել էր իր պետականությունը, հայրենիքի ամբողջականությունը, համախմբվածությունն ու ցրվել աշխարհով մեկ, չի կարող այժմ չկանգնել խաղաղության պահպանման ու ժողովուրդների բարեկամության ամրապնդման դիրքերում։ Հայ ժողովրդի համար խաղաղությունը՝ իր վերականգնված պետականության պաշտպանությունն է, իր հինավուրց մշակույթի երիտասարդացումն ու զարգացումը, իր շինարարական հանճարի իրականացումը, հայրենիքում համախմբվելու հնարավորությունը, աշխարհով մեկ ցրված սփյուռքահայության ազգապահպանման բարենպաստ պայմանը։ Հետևաբար հայ ժողովրդի սփյուռքի հատվածի լայն զանգվածների համար խաղաղության ու դեմոկրատիայի համար մղվող պայքարը հայրենասիրական պարտք է։

Դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ԱՄՆ-ի ռազմամոլները չարաշահելով ատոմային ռումբի իրենց մենաշնորհը ձգտում էին սարսափեցնել ժողովուրդներին և նրանց պահել իրենց գերիշխանության ներքո, սփյուռքահայ երիտասարդությունը բարձրացնում էր իր բողոքի ձայնը։ «Ներկայիս,—գրված է ուսանողական «Գրասեր» պարբերականում,—կը տիրապետե հյուլեական ուժի օգտագործումը, որն հիմնովին հեղաշրջելու վրա է ներկա ընկերային ու քաղաքական գոյավիճակը։ Բայց եթե ան ծառայելու ըլլա որպես սարսափի կամ կայսերապաշտական քաղաքականության գործիք, անոր մարմնավորումը իր սաղմնային վիճակի մեջ պիտի խեղդվի, որովհետև հանրային կարծիքը ուժի ու սարսափի քաղաքականության դեմ պիտի ծառանա անկասկած»[6]։ Սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերը այսօր ակտիվորեն պահանջում են զինաթափվել և Միջերկրականը դարձնել ատոմազերծ գոտի։ Մոսկվայի զինաթափման ու խաղաղության համաժողովին մասնակցեցին շատ հայեր Եվրոպայից, Ամերիկայից ու Արաբական Արևելքից։ Համաշխարհային նշանակություն ունեցող այդ համաժողովի նախապատրաստմանն ու նրա գաղափարների պրոպագանդմանը գործուն մասնակցել են նաև սփյուռքահայ առաջադեմ մտավորականները։ Այդ համաժողովի զորավիդ կանգնած լիբանանցի հարյուր անձնավորությունների թվում մենք կարդում ենք Արմեն Ղարիպի, Գրիգոր Երիցյանի, Ժիրայր Նաիրիի, Հարություն Կուժունիի, Հրանտ Գանդունիի, Միհրան Սիմոնյանի, Պետրոս Մինասյանի և այլ առաջադեմ հայ հասարակական գործիչների անունները[7]։

Սփյուռքահայ առաջադեմ բժիշկներն իրենց լուման են ներդնում նաև միջուկային ռումբի փորձարկումներն արգելելու համար մղվող պայքարին։ 120 արտոր բժիշկների հետ միասին բազմաթիվ հայ բժիշկներ՝ Վ. Ջեքմեջյանը, Ս. Ջեքմեջյանը, Ա. Ջալիքյանը, Ճ. Պաքալյանը, Լ. Փիլոյանը, Ռ. Փիլոյանը, Ղ.

---

5 Ֆարջալլա Հբլու, Ողջույն ազատատենչ ու վեհոգի հայության, որ հավատարիմ է իր հերոսական պատմության, «Մեր նշանարանն է յառաջ», 1—7—62, էջ 6։

6 Ճ. Տ. Խրլորյան, Հեղաշրջում, «Գրասեր», 1946 թ., թիվ 10, էջ 40։

7 «Մեր նշանարանն է յառաջ», 27—5—62 թ., էջ 1։

Քասապյանը, Ժանետ Քյութահլյանը և ուրիշներ, իրենց բողոքի ձայնն են բարձրացրել աղետալի այդ պայթեցումների դեմ[8]։

Պայքարելով հանուն խաղաղության՝ հայ առաջադիմական գործիչները նպաստում են իրենց երկրորդ հայրենիքի բարգավաճմանը։ Արաբական աշխարհն այժմ ապրում է ազգային զարթոնքի և ազգային տնտեսության լուսն զարգացման ժամանակաշրջանը և այդ պատճառով էլ հիմնականում կանգնած է խաղաղ գոյակցության պաշտպանման դիրքերում։ Այսպիսով, այդ երկրների սփյուռքահայ առաջադիմական հոսանքների պայքարը հանուն խաղաղության, ամբողջ արաբական ժողովրդի խաղաղության համար մղած պայքարի մի բաղկացուցիչ մասն է։

Հայ հետադիմականներին՝ դաշնակցությանը խորթ է խաղաղասիրությունն ու խաղաղ գոյակցության սկզբունքը։ Ինչպես իրենց տերերին, այնպես էլ դաշնակ ղեկավարներին դուր չի գալիս պատմության զարգացման նորմալ ընթացքը։ Նրանք ցանկանում են պատմությունը հարմարեցնել իրենց քմահաճ պահանջներին և այն դուրս բերել իր բնական հունից։ Այդ պատճառով էլ նրանք պաշտպանում են հարցերի լուծման ամենաանմարդկային և վատթարագույն ձևը՝ պատերազմը։ Բացահայտելով այդ խմբավորման ռազմամոլ տրամադրությունները դաշնակցական Արշակ Տատոյանը կրկնում է իր ղեկավարների հետևյալ թեզը. «Դաշնակցությունը Հայաստանը բոլշևիկյան լուծեն պիտի ազատե ընդհանուր պատերազմի մը ընթացքին Հայաստանի վրա հարձակվող պետության օգնելով»[9]։ Այսպիսով, նրանք միշտ ռազմամոլների կցորդներն են, երեկ Հիտլերի, իսկ այսօր՝ ամերիկյան իմպերիալիզմի։ Ռազմամոլ գաղութատեր ուժերը դեմ էին գաղութային երկրների ազատությանն ու Սուեզի ազգայնացմանը, հետևաբար նրանց հետ էր նաև դաշնակ ղեկավարությունը։ Հիտլերը ձգտում էր ստրկացնել ամբողջ աշխարհը, դաշնակցությունը «զինակցում» էր նրա հետ։ Այսպիսով, դաշնակ բյուրոյականները ոչ միայն հայ ժողովրդի ու Մայր Հայրենիքի թշնամիներն են, այլ նաև բոլոր խաղաղասեր ու ազգային անկախության համար մարտնչող ժողովուրդների թշնամին։ Այն էլ, սակայն, ակնհայտ է, որ նրանք այնքանով կարող են օգտվել իրենց այսօրվա տերերից, ինչքանով օգտվեցին հիտլերյան Գերմանիային ծառայելով։

Սիրելով իր երկրորդ հայրենիքն ու աղնվորեն ծառայելով նրան սփյուռքահայ դեմոկրատական հոսանքները արդարացիորեն գտնում են, որ իրենց ազգային կարևորագույն խնդիրներից մեկը Մայր Հայրենիքի հետ փոխադարձ հարաբերությունների ամրապնդումն է։ Դժվար է պատկերացնել, որ որևէ մեկը պաշտպանի ժողովուրդների իրավահավասարության ու բարեկամության սկզբունքը և չսիրի, չկապվի իր սեփական ժողովրդի ու Մայր Հայրենիքի հետ։ Համակված համամարդկային վեհ ձգտումներով սփյուռքահայ առաջադիմա-

---

8 Տե՛ս նույն տեղում, 1—7—1962, էջ 1 և 8։

9 «Հայրենիքիս խմբագիրներից Ժիրայր Միսաբյանը 1959 թվականին գրած հոդվածներից մեկում ցանկություն է հայտնում որպեսզի Ատոմական ռումբ նետվի Սովետական Միության վրա (Տես «Այդ», 29 հուլիս, 1959 թ.)։ Իսկ դաշնակցական տեսաբաններից Խաչանասյանը իր հերհյուրալից հոդվածներից մեկում մերժելով սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հայրենասիրությունը, ընդգծում ու հպարտանում է, որ իրենց «հայօգուտ» գործունեության հիմնական նպատակն է պատերազմի միջոցով Հայաստանում վերացնել սոցիալիստական կարգերը։ (Տե՛ս «Ազդակ», 1962 թ., մարտի 12—15 և «Մեր նշանաբանն է յառաջ», 18—4—62 թ., էջ 7—8)։

կան խավը սիրում է ինչպես իր Մայր Հայրենիքը, այնպես էլ իրեն հյուրընկալած ժողովուրդների հայրենիքը։ Անվանի գրող Ա. Անդրեասյանը սուրիահայերին խորհուրդ է տալիս. «Սիրեցեք և ծառայեցեք սուրիական հայրենիքին՝ չմոռանալով նաև Մայր Հայրենիքը»[10]։

Սերը դեպի սովետական հայրենիքը ոչ թե արդելակում, այլ, ընդհակառակը, նպաստում է սփյուռքահայությանը՝ տվյալ երկրում իր քաղաքացիական պարտքը կատարելու գործում։ Սովետական Հայաստանը ինտերնացիոնալիզմի ու ժողովուրդների բարեկամության վեհ սկզբունքների մարմնացումն է։ Սիրել սովետական հայրենիքը նշանակում է հասկանալ կամ ընդունել այդ սկզբունքները։ Սփյուռքահայը ապնվորեն ծառայելով իրեն հյուրասիրած երկրի ժողովրդին, նրա ազատության ու առաջընթացի գործին, միաժամանակ ծառայած է լինում իր Մայր Հայրենիքին։ Այդ հանգամանքը նկատելով Ֆարաջալլա Հրլուն խոսքը հայերին ուղղելով ասում է. «Այն պահուն, երբ կաջակցիք Լիբանանի անկախության համար մղված պայքարին, միանգամայն աջակցած կըլլաք նաև Հայաստանի պաշտպանությանը։ Իսկ այսօր, երբ կսատարեք լիբանանցի և արաբ մյուս ժողովուրդներուն կողմե օտար ուժերու հեռացման համար մղված պայքարին, ատով ոչ միայն Լիբանանին և բոլոր արաբներուն սատարած կըլլաք, այլ նաև ազգային և սոցիալիստական մեծ պարտականություն մը կատարած կըլլաք հանդեպ նույն ինքն Սովետական Հայաստանին»[11]։

Սփյուռքահայության ու Հայրենիքի հարաբերությունները ունեն փոխադարձ բնույթ։

Դեռևս 20-ական թվականներին Ալ. Մյասնիկյանը հայտարարում էր. «Թող գոռան ու սարսափեն դաշնակցականները։ Թող շարունակեն հորինել իրենց ստերը։ Մենք ու գաղութահայ աշխատավորներն իրար հետ կապված ենք և ավելի ևս պիտի սեղմենք մեր շարքերը»[12]։ Իսկ այժմ, երբ աղքատ ու հետամնաց Հայաստանը դարձել է արդյունաբերական ու հարուստ մշակույթ ունեցող ծաղկող մի հանրապետություն, այդ կապն ավելի է ուժեղանում։ Մայր Հայրենիքն ավելի լայնորեն է օժանդակում սփյուռքահայությանը։ Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարում ընկ. Յա. Զարոբյանը ասաց. «Մեր խնդիրն է ընդլայնել ու բարելավել մեր կապերը արտասահմանյան հայերի ու նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ, ավելի հաճախ կազմակերպել սովետահայ գիտության ու արվեստի գործիչների, գեղարվեստական ու սպորտային կոլեկտիվների ուղևորություններ արտասահմանյան հայկական գաղութներ։ Դրա հետ միասին հարկավոր է հաճախ Սովետական Հայաստան հրավիրել արտասահմանյան առաջադեմ հայերին ու ավելի լայնորեն ընդունել տուրիստական խմբեր»[13]։

Մյուս կողմից, սփյուռքահայության լայն զանգվածները Սովետական Հայաստանի գոյության մեջ են տեսնում իրենց փրկությունը։ Դեռևս 20-ական թվականների սկզբներին Կիլիկիայի հայության առավել իրապաշտ խավի ներ-

10 «Բարձունք», Հալեպ, 1962 թ., էջ 146։

11 Ֆարաջալլա Հրլու, Ողջույն ազատատենչ ու վեհոգի հայության, որ հավատարիմ է իր հերոսական պատմության, «Մեր նշանարանն է յառաջ», 1.7.62, էջ 6։

12 Ալ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1942 թ., էջ 7։

13 Յա. Զարոբյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXII համագումարին, Հայպետհրատ, 1961 թ., էջ 122—123։

կայացուցիչները իրենց դատի արդար լուծումը տեսնում էին Սովետական Հայաստանի և Սովետական Ռուսաստանի կառավարության օժանդակության մեջ։ 1920 թ. ապրիլի 10-ին Կիլիկիայի հայերի ղեկավարների առաջադիմական թևը երկար մի զեկուցագիր է դրում Վ. Ի. Լենինին և այնտեղ մանրամասնորեն նկարագրելով կացությունը օժանդակություն է խնդրում սոցիալիստական Ռուսաստանից։ Ավելի ուշ, 1921—1922 թթ., երբ արևմտյան պետությունները լկտիաբար խաբում էին հայ ժողովրդի այդ հատվածին և երբ Մայր Հայրենիքում հաստատվել էր հայկական պետականությունը, ազգապետ պրոֆ. Զենոբ Բեզջյանը հայ հասարակական գործիչներին առաջարկում էր դիմել Սովետական Հայաստանի կառավարությանը և պատվիրակություն ուղարկել Ալ. Մյասնիկյանի մոտ, քանի որ Կիլիկիայի հայության միակ փրկությունը նա սպասում էր Մայր Հայրենիքից։

Հակառակ բազմաթիվ արգելքների, սփյուռքահայության այդ բնական համոզմունքն ավելի ու ավելի ուժեղացավ։ «Արտասահմանի հայերս պետք է միանանք հայրենիքի շուրջը, և մեր քաղաքական կյանքի խարիսխը պետք է կազմի այդ համախմբումը», քանի որ սովետական իրավակարգը հայ ժողովրդին տվեց հայրենիք, պետականություն, ներգաղթելու հնարավորություն և «սովետական ռեժիմի հաստատումով հայ ժողովրդին խորքը, ստեղծագործ ուժերը երևան ելան»[14]։ Այս դարձավ սփյուռքահայ լույն զանգվածների կարգախոսը։ Այս բնական ու փոխադարձ սիրն ու համակրանքը իր ցայտուն արտահայտությունը գտավ ներգաղթի պատմական իրադարձության մեջ։ Դարեր շարունակ հայ ժողովուրդը ստիպված թողել, էր իր հայրենի տունը ու սփռվել աշխարհով մեկ։ Իսկ այժմ, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, առաջին անգամ պատմության մեջ հայը զանգվածորեն վերադառնում է հայրենիք ու շինացնում դարերի ընթացքում ավերված սուրբ հողը։

Որպես համաշխարհային ռեակցիային վաճառված խմբավորություն հայ հետադիմականները չունեն հայրենիք։ Դաշնակցական ղեկավարությունը առաջարկում է հայերին գաղթել Մադագասկար, Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ, բայց չվերադառնալ Մայր Հայրենիք։ Շարքայինների մոտ արդարանալու ու նրանց ազգասիրական զգացումները շարաշահելու համար նրանց առաջ նկարում է երևակայական մի հայրենիքի պատկեր, որը կենդանի հայրենիքի բացասումն է։ Վերջերս «Ազդակ» դաշնակցական թերթում Թեոդելյանը հրատարակեց «Հայրենասիրությունը իբրև զգացում և իմացում» խորագրով մի հոդված, որտեղ նա զարգացնում է այն տեսակետը, որ ազգ և հայրենիք հասկացողությունները առարկայական բաներ չեն, այլ զուտ իմաստասիրական կատեգորիաներ, որոնք գոյություն ունեն մարդու գիտակցության մեջ։ Որոշ դեպքերում հայրենիքի դաշնակցական պատկերացումը մնում է լոկ որպես աշխարհագրական հասկացություն, հողի մի կտոր, որի վրա գտնվում են որոշ գետեր, լեռներ, հովիտներ և որտեղ մի ժամանակ իրենք «իշխում» էին։ Հայրենիքի գաղափարի միջից նրանք դուրս են հանել նրա ստեղծագործ արդի ժողովուրդը, նրա ձեռք բերած վիթխարի հաջողություններն ու ստեղծած հոգևոր ու նյութական արժեքները։ Պատահական չէ, որ սփյուռքահայության մեջ տարածված է այն պատկերացումը, թե իրենք բաժանված են երկու հակադիր ճա-

[14] Տես «Ժողովուրդի ձայն», 7. 12. 1942 թ., էջ 2, և 26. 12. 1945 թ., էջ 2։

կատների՝ հայաստանյան և հակահայաստանյան։ Առաջին խմբավորման մեջ են դասվում սփյուռքահայության լայն զանգվածները, իսկ երկրորդի մեջ՝ սփյուռքահայ ռեակցիան և հատկապես նրա կորիզը կազմող դաշնակցական բյուրոյի աղդեցության տակ գտնվող մարդիկ։

Սփյուռքահայության հիմնական մտահոգություններից մեկն էլ ազգապահպանումն է։ Որոշ իմաստով այդ այն ազգային խնդիրն է, որի պրիզմայի միջով սփյուռքահայությունը արժեքավորում ու իմաստավորում է ազգային ու համաշխարհային հասարակական-քաղաքական ու մշակութային ասպարեզներում տեղի ունեցող փոփոխությունները։ Հասկանալի է, եթե սփյուռքահայությունը ձուլվի, կվերանան նաև նրա առաջ ծառացած խնդիրները։

Սփյուռքի արդի պայմաններում ամենից շատ շարաշահված հասկացություններից մեկը ազգապահպանությունն է։ Հայ ռեակցիոներները իրենց բոլոր գործերը աշխատում են արդարացնել ազգապահպանմանը նպաստելու պատրվակով։ Հօգուտ Իսրայելի ու ԱՄՆ-ի լրտեսություն են անում ու դատարանում և մամուլում աշխատում են ժողովրդին համոզել, որ այդ անհրաժեշտ էր ազգապահպանման համար։ Տեռորի են ենթարկում հայ մտավորականներին ու սպանում հայորդիներին և բերում են նույն պատճառաբանությունը։ Նույնիսկ երբ դաշնակ բյուրոյականները սփյուռքահայության կոչ են անում չվերադառնալ Մայր Հայրենիք այդ ժամանակ էլ փաստարկում են, որ Ավստրալիա, Կանադա ու ԱՄՆ գնալով հայերը նպաստած կլինեն ազգապահպանման սուրբ գործին։ Նրանք շարաշահելով սփյուռքահայ երիտասարդների հայրենասիրական զգացմունքները և սխալ հունով այն տանելով փորձում են արհեստական լարվածություն ստեղծել հայերի ու հյուրընկալող բնիկ ժողովրդի միջև։ Եվ այս կատարվում է հանուն հայապահպանման, ազգապահպանման։ Ակնհայտ է, որ նրանք մեծապես վնասում են սփյուռքահայության առաջ ծառացած խնդրի լուծմանը, քանի որ վտանգում են սփյուռքահայ համայնքների գոյությունն այդ երկրներում։

Դաշնակցության գաղափարախոսները նույնացնում են ազգապահպանումն ու շովինիզմը։ Այդ պատճառով էլ նրանք պաշտպանում են այն խիստ վնասակար տեսակետը, որ իբր ազգապահպանման գործն իրականացնելու համար անհրաժեշտ է ժողովուրդները հակադրել իրար, գերագնահատել սեփականն ու թերագնահատել մյուս ժողովուրդների արժանիքներն ու իրավունքները։ Մյուս կողմից, ազգապահպանման գործը նրանք լրիվ կտրում են հայրենիքի հետ սփյուռքահայության ունեցած հարաբերությունից։ Ստացվում է շատ հետաքրքիր երևույթ։ Սփյուռքահայությունն ազգապահպանման գործը պետք է իրականացնի հակադրվելով ինչպես Մայր Հայրենիքին, այնպես էլ երկրորդ հայրենիքին։ Որտե՞ղ են նրանք ցանկանում ազգը պահել...

Դաշնակները չեն հասկանում, որ պահել որևէ մի ազգի գոյությունը, նախ նշանակում է բոլոր ազգերի համագործակցության ու հարաբերությունների մեջ նրան ապահովել որոշակի տեղ։ Որևէ ժողովուրդ կամ համայնք կապրի այնքան ժամանակ, երբ կենսունակ կլինի նպաստելու մարդկության զարգացմանն ու համաշխարհային գիտության հարստացմանը։ Այդ անելու համար անհրաժեշտ է ոչ թե ժողովուրդները հակադրել իրար, այլ ուժեղացնել ժողովուրդների համագործակցությունն ու ամրապնդել նրանց բարեկամական կապերը։ Ազգապահպանում նշանակում է պահպանել սփյուռքահայության կենսունակությունը, ստեղծագործական տաղանդը։ Իսկ սփյուռքահայությունը

կարող է կենսունակ լինել, եթե նա կարողանա մի կողմից յուրացնել համաշխարհային մշակույթը և մյուս կողմից իր ազգային մշակույթի զարգացման, իր և իր երկրորդ հայրենիքի առաջ ծառացած սոցիալական ու ազգային հարցերին ճիշտ լուծում տալու միջոցով հարստացնել հայրենական ու համաշխարհային միտքը, նպաստել մարդկության առաջընթացին։ Իսկ ինչպես ցույց է տալիս հայ ժողովրդի պատմությունը, դաշնակցական ղեկավարությունը ոչ միայն չի նպաստել մեր ժողովրդի առաջ ծառացած խնդիրների լուծմանն, այլ միշտ վնասել է հայ ժողովրդի գոյությանը։ Այդ կուսակցությունը հիմնվեց որպես ազգային կազմակերպություն, սակայն վերածվեց համաշխարհային ռեակցիայի ու ռազմամոլների կցորդի։ Այն հանդես եկավ հայությունն ու Հայաստանը փրկելու հավակնությամբ, սակայն հայրենի հողի վրա իր առաքելությունն ավարտեց Ալեքսանդրապոլի տխրահռչակ պայմանագիրն ստորագրելով։ Այն իր ծննդով հայտարարեց, որ պայքարելու է բռնատիրության դեմ, սակայն ծավալեց լայն տեռորիստական գործունեություն։ Նա իրեն հայտարարեց հայ կյանքի ինքնուրույնության պաշտպան, սակայն վարեց խիստ օտարամոլ քաղաքականություն։

Սփյուռքահայ իրապաշտ ու առաջադեմ մտածողներն ու հասարակական գործիչներն ազգապահպանման գործը պայմանավորում են. ա—ժողովուրդների բարեկամության ու խաղաղ գոյակցության ամրապնդումով, բ—Հայրենիքի ու սփյուռքի միջև հարաբերությունների ուժեղացմամբ և գ—սփյուռքահայ մշակույթի զարգացմամբ։

Սփյուռքի առաջադիմական ճակատի տարբեր թևերը տարբեր նշանակություն են տալիս ազգապահպանման այդ բաղկացուցիչ մասերին։ Այդ պայմանավորված է տվյալ հոսանքի քաղաքական-գաղափարական հավատամքով ու տվյալ համայնքի ապրած երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պայմաններով։ Սակայն պետք է ընդգծել, որ գնալով ավելի է ուժեղանում սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների համագործակցության ու միասնության ձգտումը։ Այդ համագործակցության հենքը դրական վերաբերմունքն է դեպի Մայր Հայրենիքն ու երկրորդ հայրենիքի ժողովուրդը։

Գնալով ավելի կենսական է դառնում նաև սփյուռքահայ օջախների միջև հարաբերությունների ու համագործակցության ուժեղացման հարցը։ Առանձին օջախների մեկուսացված գործունեությունը բացասարար է անդրադառնում ազգապահպանման ու սփյուռքահայ մշակույթի զարգացման ընթացքի վրա։ Ինչպես ակնհայտ է, սփյուռքահայ օջախները իրենց առանձնահատկություններից բացի ունեն նաև ընդհանուր եղրեր ու խնդիրներ, որոնց հաջող լուծմանը մեծապես կնպաստի այդ օջախների միջև համագործակցության ամրապնդումը։ Աշխարհագրական բաժանումները արգելք չպետք է հանդիսանան սփյուռքահայ կյանքում հոգևոր, մշակութային և ընդհանրապես նպատակի ընդհանրություն ստեղծելու գործին։ Արդեն այդպիսի միասնական գործունեության հիմքերը կան։ Դրանցից հիմնականը կարելի է համարել հայ առաջադիմական հաստատությունների գործունեությունն ու ամբողջ սփյուռքի համախմբվածությունը Մայր Հայրենիքի շուրջ։ Գնալով ավելի հաճախակի են դառնում սփյուռքի տարբեր օջախների մշակութային պատվիրակությունների փոխադարձ այցելությունները։

Իր առաջ ծառացած վերոհիշյալ խնդիրները լուծելու համար սփյուռքահայությունը հիմնել է իր հասարակական-քաղաքական, մշակութային,

կրթական, բարեգործական ու կրոնական կազմակերպություններն ու մամուլը։

Սփյուռքահայությունը զգալի հաջողություններ է արձանագրել կրթական մարզում։ Այնտեղ այժմ գործում են մոտ 280 հայ դպրոցներ, որոնց մեծամասնությունը գտնվում է Միջին և Մերձավոր Արևելքում. Լիբանանում՝ 63, Պարսկաստանում՝ 68, Սիրիայում՝ 60, Թուրքիայում՝ 33։ Հայ դպրության վիճակը անմխիթար է հատկապես ԱՄՆ-ում և Ֆրանսիայում։ Սփյուռքում գործում է նաև մեկ բարձրագույն կրթական հաստատություն (Բեյրութի Հայկազյան կոլեջը), մեկ երկամյա ինստիտուտ (Կիպրոսի Մելքոնյան հաստատությունը), մեկ նկարչական ակադեմիա (Հալեպի Մ. Սարյանի անվան նկարչական ակադեմիան) և երեք հոգևոր սեմինարիա։

Սփյուռքահայ ուսումնական հաստատությունները բաժանվում են ըստ երկու հատկանիշի. կրոնա-հարանվանական (հաստատություններ, որոնք պատկանում են Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն, հայ ավետարանականներին և հայ կաթոլիկներին) և քաղաքական (հաստատություններ, որոնք գրտնվում են ռամկավարների, բարեգործականի, հնչակների, դաշնակների ազդեցության տակ)։ Կան նաև չեզոք (քաղաքական պատկանելիության տեսակետից) կրթական հաստատություններ։ Մի շարք սփյուռքահայ օջախներում գործում են նաև հայ ուսուցչական միություններ, որոնք կատարում են պրոֆմիության ու մեթոդ կաբինետի ֆունկցիաներ։ Համարյա բոլոր ուսումնական հաստատություններն ունեն իրենց շրջանավարտից միությունները, որոնք փաստորեն մշակութային ակումբներ են։ Սփյուռքահայ դպրոցը ոչ միայն կրթական օջախ է, այլ նաև յուրահատուկ մշակութային կենտրոն, սփյուռքահայ գրողների, հայագետների, մտավորականների հիմնական աշխատավայրն ու նյութական ապահովության աղբյուրը։ Այս մարզի մեջ սփյուռքահայության հիմնական դժվարություններն են. նյութական միջոցների սահմանափակությունը, որակյալ մանկավարժների սակավությունը, նոր ու որակյալ դասագրքերի և համընդհանուր ծրագրերի բացակայությունը։

Սփյուռքահայ մշակույթի մեջ իր արժանի տեղն է գրավում մամուլը, որը հայ համայնքները կազմակերպող, դաստիարակող ու լուսավորող հիմնական գործոններից մեկն է, սփյուռքահայ գրականության ու տեսական-քաղաքական մտքի դարբնոցը։ Արտասահմանում այժմ հրատարակվող հայկական թերթերի ու պարբերականների ընդհանուր թիվը հասնում է 135-ի, որից 16 օրաթերթ, 24 շաբաթաթերթ, 40 ամսաթերթ։ Բացի այդ, մի շարք ուսումնական հաստատություններ ու մշակութային կազմակերպություններ հրատարակում են նաև իրենց ալմանախները։

Սփյուռքահայ մամուլը կարելի է բաժանել ըստ երեք հատկանիշների. քաղաքական պատկանելիության, ուղղվածության և ըստ լեզվի։ Ըստ քաղաքական պատկանելիության այն բաժանվում է 5 խմբի. կոմունիստական, հընչակյան, ռամկավար, չեզոք և դաշնակցական։ Ըստ թեքման սփյուռքահայ մամուլն ունի հետևյալ բաժինները. քաղաքական-հասարակական, գրական-գեղարվեստական (այսպիսի բովանդակություն ունեն հրատարակվող թերթերի մեծամասնությունը), կրոնա-բարոյական, մանկա-պատանեկան, ռժշկական և երաժշտական։ Հայկական արտասահմանյան կազմակերպությունները հրատարակում են նաև թերթեր օտար լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն և այլ լեզուներով։ Պետք է, սակայն, ընդգծել, որ ինչպես սփյուռքահայ կրթական հաստատությունների մեծամասնությունը, այն-

պես էլ սփյուռքահայ մամուլի ճնշող մեծամասնությունը գտնվում է սփյուռքահայ կյանքին տոն տվող հայրենասիրական ու առաջադիմական կազմակերպությունների ու հասարակությունների ազդեցության տակ։

Զգալի հաջողություններ է արձանագրել նաև սփյուռքահայ արվեստն ու գրականությունը։ Սփյուռքահայ գրականությունն ունի երեք ուղղություն. առաջադիմական, հետադիմական և օտարացող-կոսմոպոլիտ, որը կարելի է համարել երկրորդի տարատեսակներից մեկը։ Առաջինը հագեցված է հայրենասիրությամբ, հումանիզմով, լավատեսությամբ և ընթերցողներին ներշնչում է ինքնավստահություն ու ազգային արժանապատվություն։ Այն արտացոլում է սփյուռքահայության ապրած երկրների ժողովուրդների կյանքն ու պայքարը, նրանց բարեկամությունը։ Պետք է նշել, որ այս վերջին կողմով սփյուռքահայ գրականությունը տարբերվում է գաղութահայից։ Նրան բնորոշ է նաև վերացականությունից հրաժարվելը։ Այդ գրականությունն իր մեջ համադրում է այն առաջավոր ավանդությունները, որոնք ստեղծել են ինչպես անցյալի մեծանուն հայ գրողներն ու երկրորդ հայրենիքի գրիչի վարպետները, այնպես էլ սովետահայ գրականությունը։ Սփյուռքահայ հետադիմական գրականությունը անկարող է հոգևոր սննդի աղբյուր դառնալ, քանի որ այն անհայրենիք է, վերացական, երազկոտ, նպատակսլացությունից զուրկ։ Այդ հեղինակների համար ներկան անորոշ է, ապագան մշուշապատ։ Լավագույն դեպքում նրանք անցյալի երգիչներ են, մի անցյալ, որը նեղացված է իրենց քմահաճույքով։ Այժմ սփյուռքահայ գրականության մեջ նկատելի է հետադիմական գրողների աստիճանական անցումը դեպի առաջադիմական ճակատը։ Շատերը դեռևս տատանվում են, իսկ քիչ չեն այնպիսիք, որոնք հրաժարվելով իրենց անցյալի սխալներից, իրենց ավանդն են ներդնում սփյուռքահայ նոր գրականության զարգացման գործում։

Վերջերս հատկապես լայն ծավալ է ստացել երաժշտական գործունեությունը։ Այդ գործում պետք է նշել, մի կողմից սփյուռքահայ մասնագետների ու մտավորականների անձնվեր աշխատանքը, իսկ մյուս կողմից՝ հայրենիքից մեկնած երաժշտական գործիչների ու խմբերի բարերար ազդեցությունը։ Սփյուռքահայ երաժշտությունը թեև որոշ տարրեր վերցրել է տեղական ու եվրոպական երաժշտությունից, սակայն չի կորցրել իր ազգային դիմագիծը։ Նույնը չի կարելի ասել սփյուռքահայ նկարչության մասին, չնայած այն փաստին, որ սփյուռքում ստեղծագործում են զգալի թվով շնորհալի նկարիչներ ու քանդակագործներ։ Համեմատաբար թույլ է զարգացած սփյուռքահայ թատրոնը, որի կարիքը հատկապես զգալի է նոր սերնդի դաստիարակման համար։ Այդ հանգամանքը վերջերս ավելի է գիտակցվում սփյուռքահայ մշակութային կազմակերպությունների կողմից։ Կարծես սփյուռքահայ թատրոնն սկսում է իր տեղաշարժը։

Զգալի աշխուժություն է նկատվում նաև սփյուռքահայ տեսական մտքի բնագավառում, հատկապես փիլիսոփայության, գեղագիտության ու գրականագիտության ասպարեզներում։ Գեղագիտության մեջ ակներև է պայքարը իրապաշտ և վերացական արվեստի պաշտպանների միջև։ Սակայն ուրախալի է, որ սփյուռքահայ մտավորականության ճնշող մեծամասնությունը պաշտպանում է հայ իրապաշտ արվեստի ավանդությունները։

Որպես տեսական մտքի ամենավերացական ասպարեզ, փիլիսոփայական միտքն սփյուռքում համեմատաբար ավելի թույլ է զարգացած։ Նախ՝ դա հետև-

վանք է այն հանգամանքին, որ դժվար է ճիշտ ընդհանրացնել կյանքի ու գիտության կուտակած փորձը, մարդկանց պրակտիկ գործունեությունը։ Պատահական չէ, որ հաճախ շատ սփյուռքահայ մտավորականներ իրենց անմիջական գործունեությամբ առաջադիմական են, իսկ իրենց փիլիսոփայությամբ հակասում են իրենք իրենց։ Քիչ դեր չի խաղում նաև այն փաստը, որ սփյուռքահայ արդի փիլիսոփայական միտքը, զանազան պատճառներով, կտրվել է նախորդ դարերի, հատկապես 19—20-րդ դարերի, հայկական հարուստ առաջադիմական իմաստասիրական մտքի նվաճումներից և ավելի շատ ընկել է արևմտյան մոդայական փիլիսոփայական դպրոցների ազդեցության տակ։ Չպետք է նաև մոռանալ, որ հայ հայրենասեր ու առաջադիմական մտավորականությունը սերտորեն կապված լինելով ժողովրդի հետ այնքան է ծանրաբեռնված զանազան անմիջական աշխատանքներով, որ քիչ ժամանակ ու հնարավորություն ունի զբաղվելու փիլիսոփայական հարցերով։ Վերջապես սփյուռքում հատուկ աշխատանք է տարվում զարգացնելու հայ մամուլը, դպրությունը, գրականությունը, քանի որ նրանց կարիքն անմիջականորեն ավելի զգալի է, քանի որ նրանք ավելի հեշտ ու շուտ են յուրացվում ու արժեքավորվում լայն զանգվածների կողմից։ Այնուամենայնիվ, գոյություն ունի սփյուռքահայ փիլիսոփայական միտքը՝ իր զանազան ուղղություններով։

Նախնական ուսումնասիրություններն արդեն ցույց են տալիս, որ սփյուռքահայ մտավորականների շարքերում կան մարքսիզմի հետևորդներ (Հ. Մադեյան, Հ. Աղպաշյան, Դ. Եղիցյան և ուրիշներ), մանրբուրժուական սոցիալիզմի կողմնակիցներ (Ա. Կիտուր, Ա. Կենճյան, Պեյլերյան և ուրիշներ), կրոնական սոցիալիզմի պաշտպաններ (Տ. Ներսոյան), էքզիստենցիալիստական (Ա. Թիրեաքյան), նեոթոմիստական (Աղաջանյան և այլ կաթոլիկ մտավորականներ), պոզիտիվիստական (Հ. Խաչատրյան և ուրիշներ) փիլիսոփայության ջատագովներ։ Հայ իրականության մեջ հատկապես ուժեղ է սարտրյան էքզիստենցիալիստական ուղղությունը, իսկ նեոպոզիտիվիզմի տարբերակներից տարածված է սեմանտիկական փիլիսոփայությունը։ Հակակոմունիզմը սփյուռքահայ ռեակցիայի տեսական պլատֆորմն է։

Հայ դեմոկրատական ճակատը միասնական չէ իր գաղափարախոսությամբ, մի հանգամանք, որը ռեակցիան աշխատում է օգտագործել առաջադիմական ուժերը ջլատելու համար։ Բոլոր դեպքերում, սակայն, նրա ներկայացուցիչների մեջ գերիշխում է իրապաշտական մոտեցումը դեպի իրականությունը ու բարի են նրանց ձգտումները։ Թույլ տրված տեսական սխալները չարամտությունն ու իրականությունը աղավաղելու հետևանք չեն, մի բան, որը բնորոշ է հետադիմական սփյուռքահայ փիլիսոփաներին ու մտածողներին։ Առաջադիմական ու հայրենասիրական միացյալ գործունեության ընթացքում հայրենական գիտական մտքի ազդեցության տակ նվազում են սփյուռքահայ այդ մտավորականների մի մասի տեսական սխալներն ու տատանումները։

Սփյուռքահայ կյանքն ուսումնասիրող հեղինակների ուշադրությունից վրիպել է սփյուռքահայության հաջողությունները բնական գիտությունների ասպարեզում։ Այդ ասպարեզում ևս սփյուռքն ունի իր համեստ ներդրումը, քանի որ սփյուռքում գործում են ազգային բուժհիմնարկներ, դեղատներ, ֆիզիկայի առանձին լաբորատորիաներ և հրատարակվում են բժշկական հանդեսներ ու գրքեր։ Հիշատակության արժանի է Հալեպի Լ. Նաճարյան—Գ. Գյուլպենկյան

միջնակարգ դպրոցի ու Բեյրութի Հայկազյան կոլեջի հաջողություններ։ Նրանք առաջինը Արաբական Արևելքում արձակել են հրթիռներ։

Անուշադրության է մատնված նաև սփյուռքահայ սպորտի ուսումնասիրության հարցերը։ Սփյուռքում ամենահայտնի հայկական սպորտային ակումբներից են ՀՄՄ-ը, «Անդրանիկը», «Վասպուրականը» և ուրիշներ։ Վասպուրականի ֆուտբոլային թիմը երկար ժամանակ հանդիսացել է Սիրիայի ախոյանը, իսկ ՀՄՄ-ը՝ Լիբանանի։

Սփյուռքահայ կյանքն ուսումնասիրող հեղինակները հաճախ դժվարանում են պարզ պատկերացում կազմել արտասահմանյան հայկական արդի օջախների ու նրանց կազմակերպությունների գործունեության մասին, քանի որ մամուլում ու գրականության մեջ նրանց մասին կամ քիչ տեղեկություններ կան և կամ էլ եղածը թերի է ու հակասական։ Այս վիճակը պարտավորեցնում է սփյուռքահայ մտավորականներին, որպեսզի նրանք ստուգեն ու հրատարակեն ճշգրիտ տվյալներ սփյուռքի յուրաքանչյուր օջախի հայության, դպրոցների, ուսուցիչների, արհեստավորների, մտավորականների, գործարանատերերի թվի մասին։ Սփյուռքահայ յուրաքանչյուր հասարակություն իր պարտքը պետք է համարի հրապարակելու իր պատմությունն ու կատարած գործերի մասին տեղեկություններ։ Ցանկալի կլիներ, որ սփյուռքահայ կազմակերպությունների հաշվետվությունները կենտրոնացվեն ու պահվեն մի տեղում, որպեսզի սփյուռքի պատմության ուսումնասիրողը՝ կարողանա դրանցից օգտվել։ Վատ չէր լինի, եթե այդ հաշվետվությունների մի պատճենը ուղարկվեր Երևանի թանգարաններից մեկը։

Սփյուռքի պատմությունը պետք է գրել սփյուռքահայ ու սովետահայ պատմաբանների միացյալ ջանքերով։ Այդ համագործակցությունը կնպաստի հայ նոր պատմության ամբողջական շարադրմանն ու հայրենիքի ու սփյուռքի կապերի ամրապնդմանը։